

Ռուզան Միրզոյան

ԵՊՀ

ԺԱՆ-ՔՐԻՍՏՈՖ ՌՅՈՒՖԵՆԸ ՀԱՅԵՐԵՆ

Հողվածում փորձել ենք ներկայացնել ֆրանսիացի ժամանակակից գրող, հրապարակախոս, դիվանագետ, բժիշկ Ժան-Քրիստոֆ Ռյուֆենի 2014թ. լույս տեսած «Կարմիր ժապավենը» վեպը, որտեղ իրեն հատուկ զուսպ, կիրթ լեզվամտածողությամբ, կշռադատված, զգացմունքային, հոգեբանական վերլուծություններով վեր է հանում պատերազմի դաժան կողմերը, պատկերում է վերջինիս նյութական և հոգևոր արհավիրքները: Մարդկային վսեմագույն հատկանիշներից ներկայացնում է հավատարմությունը, հպարտությունը, որոնք թելադրված չեն իրավիճակներով և հանգամանքներով: Անդրադարձել ենք նաև վեպի վերնագրին և դրա թարգմանությանը, որն այս պարագայում լիարժեքորեն արտահայտում է ամբողջ ստեղծագործության ոչ միայն բովանդակությունն, այլև գաղափարը:

***Հիմնաբառեր.** Ժան-Քրիստոֆ Ռյուֆեն, ժապավեն, պատերազմ, հավատարմություն, համատեքստ, բառի ընտրություն, հեղինակի միտում:*

Առաջին անգամ հայ ընթերցողին է ներկայացվել ֆրանսիացի ժամանակակից գրող, հրապարակախոս, դիվանագետ, բժիշկ, «Բժիշկներ առանց սահմանի» միջազ-

գային մարդասիրական կազմակերպության հիմնադիրներից մեկի՝ Ժան-Քրիստոֆ Ռյուֆենի «Կարմիր ժապավենը» վեպը: Այն Ֆրանսիայում լույս է տեսել 2014 թվականին՝ Առաջին աշխարհամարտի տարելիցին որպես մերժում, դատապարտում, ժխտում 20-րդ դարի Առաջին համաշխարհային պատերազմի անօրինակ ողբերգության, որի ընթացքում զոհվել է մոտ 9 միլիոն զինվորական և ավելի քան 7 միլիոն խաղաղ բնակիչ: Դա մարդկության պատմության ամենաարյունալի պատերազմներից մեկն էր, որը հանգեցրեց քաղաքական մեծ փոփոխությունների և հեղափոխությունների:

Ստեղծագործությունը ներշնչված է հեղինակի ընկերոջ՝ լուսանկարիչ Բընուա Սիզամբերգի իրական պատմությամբ, որն Առաջին աշխարհամարտից վերադառնում է Ֆրանսիայի բարձրագույն պարզևո՛վ՝ Պատվո լեգեոնի շքանշանով: Սակայն արարողակարգի ժամանակ, հարբած վիճակում նա այդ մեդալը կախում է իր շան վզին: Նրան ձերբակալում են և բանտ նետում պետությանը հասցրած անարգանքի համար:

Հարգանքի տուրք

2011 թվականն էր: Ֆրանսիական մի շաբաթաթերթ ինձ Հորդանան ուղարկեց ուսումնասիրելու համար արաբական գարունը: Ի դժբախտություն ինձ, սա այն միակ երկիրն էր, որտեղ բացարձակապես ոչինչ տեղի չէր ունենում:

Բնձ ուղեկցող լուսանկարիչ Բրնուա Միգեմբեգի հետ մեր օրերն անցկացնում էինք գարեջուր ըմբռնելով և միմյանց պատմություններ պատմելով:

Բրնուան տաղանդավոր և մեծ երևակայության տեր մարդ էր: Ապրած տարիները թույլ էին տվել անցնել դարը և շատ մոտիկից զննել վերին աստիճանի վիպական, մեծաքանակ իրադարձություններ:

Մակայն արկածային բոլոր պատմություններից, որ նա պատմել էր այդ պարապ օրերին, մտապահել եմ միայն մեկը: Դա շատ պարզ ու կարճ պատմություն էր, բայց ես անմիջապես զգացի, որ այն ուներ կյանքի այն եզակի և փոքրիկ տարրերը, որոնցով հնարավոր էր ստեղծել վիպական կառույց:

Դա նրա պապի պատմությունն էր: 14 թվականի պատերազմից վերադառնալով որպես հերոս և Պատվո լեգեոնի շքանշանակիր, նա մի օր խմիչքի ազդեցության տակ կատարել է իր ժամանակի համար անհավատալի մի արարք, մի զանցանք, որի պատճառով ձերբակալվել ու դատապարտվել է:

Այդ դրվագն արտացոլված է գրքի վերջում:

Այս վեպը գրելիս չեմ դադարել մտածել Բրնուայի մասին: Ավա՛դ, նա չկարողացավ այն կարդալ, քանի որ հիվանդությունը նրան հաղթեց այն ժամանակ, երբ ավարտում էի գրիքը:

Միայն հասցրեցի ասել, որ գիրքն իրեն եմ ձոնել:

Այս էջերը նրան են ուղղված, նրա հիշատակին:

Նա թանկ ընկեր էր և շատ մեծ լուսանկարիչ:

(էջ 197-198):

Այս պատմությունն է ընկած «Կարմիր ժապավենը» վեպի հիմքում, որը Ժ-Ք. Ռյուֆենի գրչի ներքո դարձել է հավատարմությունը, փոխադարձ մեծ սերը գովերգող մի շատ գեղեցիկ վեպ, որտեղ մերժվում են անազնվությունը, պատերազմն՝ իր սարսափներով:

Այս պատերազմն ապրած ոչ մի մարդ այլևս չի կարող հավատալ, որ անհատը որևիցե արժեք ունի:

(էջ 16)

Պատերազմի թողած ավերածություններն ավելի ուժգնացնելու և ամբողջական դարձնելու համար հեղինակն այդ մասին խոսում է ոչ միայն հերոսների միջոցով, այլև հասարակ ժողովրդի բերանով՝ ներկայացնելով նրանց վերաբերմունքն այդ համամարդկային աղետի հանդեպ, որը թողել է ոչ միայն նյութական, տեսանելի ավերածություններ, այլև հոգևոր՝ անտեսանելի ու անդառնալի:

- Ճանաչո՞ւմ եք նրա տիրոջը,- հարցրեց նա:

- Բոլորն են նրան ճանաչում: Երկրի տղա է:

- Ի՞նչ վատ բան է արել:

...

- Ոչինչ: Միայն՝ լավ բան: Նա այդ արյունարբությունների

*երեսին է շարտել ճշմարտությունը: Բնականաբար,
դա նրանց դուր չի եկել և վրեժ են լուծում:*

- Զինվորականն է ինքը:

*- Իհարկե, ամբողջ հանցախումբը: Գեներալները,
անսկզբունք քաղաքագետները... և հրանոթներ վա-
ճառողները: Բոլոր նրանք, ովքեր երկրի ջահել տղա-
ներին ուղարկեցին մահվան: (էջ 115-116)*

*Ավելի ճիշտ կլինի, որ նահանգապետը, ոստիկաննե-
րը, պարտականությունից փախչող պաշտոնյաները,
որոնք օգտվել են իրենց դիրքից, պատասխան տան:
Եթե այդ տղային դատեն, մեծ դժբախտություն կլինի:
(էջ 117)*

Ինչպես տեսնում ենք մեջբերված օրինակներից, ժո-
ղովրդի ներկայացուցիչ ծեր, կույր կինը, որը 1915 թվակա-
նին կորցրել է տղային և երեք թոռներին այդ արյունալի
պատերազմի սանձազերծող և մեղավորներ է ճանաչում
գեներալներին, քաղաքագետներին և հրանոթներ վաճա-
ռողներին և գտնում է, որ պատասխանատվության պետք է
կանչվեն ոչ թե իրենց կյանքը վտանգած և դժոխքով անցած
զինվորներն, այլ նահանգապետերը, ոստիկանները, պար-
տականությունից փախչող պաշտոնյաները:

Վիպակի հերոսներն են՝ հեղափոխական ոգով
գրագետ գյուղացին, նրա շունը, սիրած կինը, քննիչը, պա-
տերազմը և սերը: Վեպում Ժ-Ք. Ռյուֆենը իսկական ար-

վեստագետին հատուկ տաղանդով միանգամայն մերժում է պատերազմի վայրագությունները և բացահայտում է մարդկային էության պարադոքսը:

1919 թվականն է: Փոքրիկ Բերրի քաղաքի բանտի վերածված զորանոցում փակված է պատերազմի հերոս Մորլակը, իսկ դրսում նրա հավատարիմ շունը գիշեր-ցերեկ անդադար հաչում է: Քաղաքից ոչ հեռու, մերձավոր գյուղերից մեկում մի երիտասարդ կին՝ հողի աշխատանքից մաշված, ի դեպ՝ գեղջկուհու համար կրթված, հույսով սպասում է իր սիրեցյալին: Ազնվական ծագումով դատավորը, որի սկզբունքները խարխլվել են պատերազմի պատճառով, եկել է Բերրի քաղաք՝ դատավճիռ կայացնելու: Ահա երեք հիմնական կերպարները, որոնց մեջտեղում շունն է՝ ողբերգության հանգուցալուծման բանալին:

Պատերազմը շատ ծանր հետք է թողել գլխավոր հերոսի հոգեբանության վրա, նա կորցրել է հավատը ամեն ինչի հանդեպ, նույնիսկ հերոսություն, հայրենասիրություն, քաջություն գաղափարները բարբաջանք է համարում և այդ համոզմունքով փորձել է Ռուսաստանի օրինակով հեղափոխություն կազմակերպել իր նման մտածող զինվորների հետ՝ վերջ դնելու համար պատերազմին.

- Պատկերացնո՞ւմ եք: Մենք դժոխքի խորքում էինք՝ կոյանոցում: Աշխարհը սուզվել էր բարբարոսության մեջ: Իսկ միևնույն ժամանակահատվածում ինչ-որ մի վայրում ժողովրդի կամքը հնարավորություն էր տվել ազատվել ի բռնակալից: Պետք էր աշխատանքն

ավարտին հասցնել: Պետք էր հեղափոխությունը շարունակել, ոչ միայն Ռուսաստանում, այլ նաև ամենուր: Դրան հասնելու առաջին քայլը պատերազմին վերջ դնելն էր: Եթե ընդվզեինք, գեներալները մենակ կմնային, որպեսզի... Կարող էինք նրանց տապալել նույն մեթոդներով, ինչպես եղավ Նիկոլայ II-ի հետ: (էջ 140)

Այնուհետև հաջորդում է վեպի մյուս հերոսի՝ ազնվական ծագումով դատավորի, որը նույնպես անցել է պատերազմի բովով և ի պաշտոնե հետաքննում է Մորլակի գործը՝ փորձելով հասկանալ կյանքի հանդեպ նրա դրսևորած ծայրահեղ ժխտողականության պատճառը, դատողությունը.

Մորլակը մի թզուկ էր, որին խժռում էին հսկայի ձգտումները: Չզիտես կարեկցել նրան իր անձի մեջ այդքան մեծ գաղափարներ ներփակելու համար, թե՞ ծիծաղել նման ծրագրեր ընդգրկելու հավակնության համար: (էջ 142)

Եվ հեղինակը գագաթնակետին հասցնելով Մորլակի ատելությունը պատերազմի, շքանշանների, բռնության հանդեպ, իրեն շնորհած ամենամեծ՝ Պատվո լեգեոնի շքանշանը, կախում է իր շան վզից՝ հետևյալ բառերն արտասանելով.

Եվ՝ բռնելով Պատվո լեզեռնի խաչը, վերոնշյալ Մորլակն ավելացրեց հետևյալը. 'Զինվոր Գիյոմ, հանրապետության նախագահի անունից ձեզ շնորհում եմ խայտառակության շքանշան, որպես փոխհատուցում կույր բռնությանը, հնազանդությանն՝ ամենաանասնական բնազդներին ու հզորներին և ձեզ դարձնում եմ Պատվո լեզեռնի ասպետ: Շքանշանը կախելով շան վզին նա զինվորական ողջույնի նմանակում արեց և պտտվեց շքերթի կենտրոնում տեղավորվելու համար: (էջ 183)

Կարծում ենք, որ վեպի ամենաամբողջական և մարդասեր կերպարը դատավոր՝ Լանթիե դյու Գրեզինն է:

Այս անվերջանալի պատերազմի ընթացքում Լանթիեն անցել է տարատեսակ զգացմունքների միջով: Սկսել է որպես իր սոցիալական դասը ներկայացնող երիտասարդ իդեալիստ (բուրժուա, չնայած ազնվականի տոհմական ազգանվան): Սկզբում միայն Հայրենիքն էր կարևոր իր բոլոր մեծ գաղափարներով՝ Պատիվ, Ընտանիք, Ավանդույթ: Մտածում էր, որ անհատներին՝ իրենց մասնավոր, թշվառ հետաքրքրություններով պետք է ստորադասել դրանց: Այնուհետև խրամատներում՝ շփվելով այդ անհատների հետ, երբեմն նրանց կողմն էր բռնել: Պատերազմի ավարտին էր, երբ մեկ-երկու անգամ ինքն իրեն

*հարց էր տվել, թե նրանց կրած տառապանքներն
ավելի արժանի չե՞ն հարգանքի, քան այդ գաղա-
փարները, հանուն որոնց դրանք նրանց պարտադ-
րում էին: (էջ 35-36)*

Նա դատավորի իր աշխատանքն իրականացնում է ոչ միայն առաջնորդվելով չոր փաստերով և տվյալներով, այլ փորձում է թափանցել երևույթների խորքը, հասկանալ գործողությունների իրական դրդապատճառներն ու հոգեբանական շարժառիթները և նաև օգնել մարդուն ճիշտ գնահատել ու ճանաչել ինքն իրեն ու իր արարքները և միջոցներ գտնել նրան օժանդակելու և երջանիկ դարձնելու:

- Դուք շատ անարդար եք այս խեղճ կենդանու հանդեպ,- ասաց դատավորը մտահոգ տոնով: Նրա վրա բարկանում էք իր հավատարմության համար: Գտնում եք, որ դա կենդանուն հատուկ հատկանիշ է: Բայց մենք բոլորս էլ օժտված ենք դրանով և դուք առաջինը:

Նա շրջվեց դեպի Մորըլակը:

- Իրականում այդ հատկանիշն այնքան վսեմ է, որ չեք կարողացել ներել Վալանտինին դրա պակասի համար: Դուք ամենահավատարիմ մարդն եք, որ ճանաչում եմ: Ապացույց՝ չեք հրաժարվել սիրուց, որ տաժում եք նրա հանդեպ: Նրա համար եք այստեղ վերադարձել, չէ՞: (էջ 191)

- Կարծում եմ, որ իրական տարբերությունը կենդանիներից,- շարունակեց դատավորը,- հավատարմությունը չի: Մարդու ամենաբնութագրական գիծը, որը կենդանիների մոտ իսկական թերություն է, դա այլ զգացմունք է, որից դուք չափից շատ ունեք:

- Ո՞րը:

- Հպարտությունը: (էջ192)

Այս կարճ պատմությունը լի է բանաստեղծականությամբ, կյանքով, ապշեցուցիչ պարզությամբ, սակայն ամեննին՝ ոչ պարզունակությամբ: Սա մի հրաշալի վեպ է հավատարմության մասին. լինել հավատարիմ աշխատանքին (Լանթիե դյու Գրեզ), հավատարիմ սիրած կնոջը (Մորլակ), հավատարիմ սիրած տղամարդուն (Վալանտին), հավատարիմ տիրոջը (Գիյոմ-շուն): Լինել ազնիվ ընկերների հանդեպ, պայքարել նրանց համար, ում սիրում ես, սրանք հատկանիշներ են, որոնք ավելի բնութագրական են կենդանիների համար, իսկ մարդկային էակին չի տրված ավելի հեռուն գնալ և եղբայր ճանաչել նրան, ով պայքարում է քո դեմ:

Թարգմանական հարցերից միայն կցանկանայինք խոսել վեպի վերնագրի թարգմանության մասին: Եթե բառացի թարգմանենք վերնագիրը, ապա հայերենում կունենանք **Կարմիր վզկապը կամ շղթան, թուր, վզնոցը տարբերակները**, քանի որ բառարաններում collier բառն ունի վերոնշյալ իմաստները, մինչդեռ ընտրված է «Կարմիր ժա-

պավենը» տարբերակը: Ինչո՞ւ: Վերնագրի այս ընտրությունը պայմանավորված է համատեքստով: Միայն վիպակի ավարտին է Մորլակն արտահայտում իր վերաբերմունքը, դիրքորոշումը հերոսության, պատերազմի հանդեպ և մեկնաբանում իր արարքը՝ պետության կողմից իրեն շնորհված Պատվո լեգեոնի շքանշանն իր շան վզին կախելը:

- Այդ նա էր հերոսը: Ահա, թե ինչ էի մտածում: Ոչ միայն նրա համար, որ հետևել էր ինձ ռազմաճակատում և վիրավորվել էր: Ո՛չ, ամեն բան ավելի խորքային էր, ավելի արմատական: Նա ուներ զինվորին բնորոշ բոլոր հատկանիշները: Մահու չափ անձնվեր էր, քաջ, անգութ՝ թշնամու հանդեպ: Նրա համար աշխարհը ստեղծված էր բարիներից ու չարերից: Մի բառով ասած՝ մեջը մարդկային ոչինչ չկար: Բիարկե, նա շուն էր... Բայց մենք, որ շուն չէինք, մեզանից նույն բանն էին պահանջում: Պարզները, շքանշանները, հիշատակումները, սոաջխաղացումները, բոլոր դրանք ստեղծված են փոխհատուցելու համար անասունին հատուկ արարքները: (էջ 154)

Եթե ընդունենք, որ շան վզին կապում են թոկ, շղթա, վզկապ, ապա, իհարկե, ճիշտ բառը պետք է լիներ վզկապը, շղթան, թոկը բառերից որևիցե մեկը, բայց վեպում խոսքը Պատվո լեգեոնի շքանշանի մասին է: Հայտնի է, որ Պատվո

լեզունի շքանշանը կախված է կարմիր ժապավենից : Դրանով է պայմանավորված բառի այս ընտրությունը, որը կարծում ենք՝ արտացոլում է վեպի բովանդակությունը և հեղինակի նպատակը:

Հայտնի է, որ գեղարվեստական թարգմանության հիմնական նպատակն է համարժեքորեն փոխանցել հեղինակի միտումը, ինչն էլ հաջողությամբ արված է վեպի թարգմանության մեջ:

Գրականության ցանկ

1. Միրզոյան, Ռ. (2016) *Թարգմանության տեսակները* (հոդված), Ակունք, N1, Երևան:
2. Ռյուֆեն, Ժ.-Ք. (2016) *Կարմիր ժապավենը*, Երևան, Անտարես հրատ. (թարգմ. Ռ. Միրզոյան):
3. Rufin J.-Ch. (2014) *Le Collier Rouge*, Paris, Gallimard.
4. <https://fr.wikipedia.org/wiki/>

RUZAN MIRZOYAN - Jean-Christophe Rufin in Armenian - The present article investigates contemporary French writer, publicist, diplomat, doctor Jean-Christophe Rufin's novel "Le Collier Rouge" published in 2014. The author with his reserved, erudite linguistic mind-set as well as well-considered, emotional and psychological analyses uncovers the harsh aspects of the war, depicts its calamities, which inflicted irrevocable damage on the spiritual and material worlds. Among the sublimest human traits, he highlights faithfulness and pride which are not

defined by situations and circumstances. The article also touches upon the title of the novel and its translation, which in this case fully reflects not only the content, but also the ideology of the story.

Key words: *Jean-Christophe Rufin, ribbon, war, faithfulness, context, word choice, author's intention.*

РУЗАН МИРЗОЯН - Жан-Кристоф Руфин на армянском - В данной статье представлен роман современного французского писателя, публициста, дипломата, врача Жан-Кристоф Руфина «Красная лента», в котором показаны ужасы и последствия войны. Присущее ему взвешанным, психологическим анализом автор рассматривает лояльность и гордость как величественные человеческие качества, которые не продиктованы ситуацией или обстоятельствами. В статье представлена также интерпретация заголовка и ее перевода, который полностью олицетворяет замысел автора.

Ключевые слова: *Жан-Кристоф Руфин, лента, война, лояльность, контекст, выбор слов, авторский замысел.*